

# ՆԱԻԹԱՅՐՁԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

## IV

ԿԱՆԱՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գործարանական կետանք ունեցող բոլոր երկրների համար կանաց և երեխաների աշխատանքի խնդիրը վազուց արդէն դառել է օրւայ հարց, օրւայ չարիք։ Գրւում են բազմաթիւ ուսումնասիրութիւններ ու յօդւածներ, որոնց հիման վրայ կառավարութիւնները կազմում, յարմարեցնում են որոշ օրէնքներ թէ նրանց աշխատանքի տևողութեան, թէ վարձագնի, թէ աշխատելու տեղի մաքրութեան և ուրիշ առողջապահական սպայմանների մասին և այլն։ Վերջին 1891 թւի ընթացքում, օրինակ, Գերմանիայում օրէնք դրաց՝ կանաց աշխատանքը տևելու է ամենաշատը 11 ժամ, նրանք չեն աշխատելու երբէք գիշերը և այլն։ Իսկ երեխաների համար շատ տեղերում արդէն դրւած են օրէնքներ, որոնց հիման վրայ որոշ հասակից փոքրերը չեն թոյլատրում աշխատելու, աշխատելու ժամանակի չափն են որոշում և այլն։ Օր. նոյն 1891 թւին Գերմանիայի օրէնսդրութիւնը որոշեց շը թոյլ տալ 13 տարեկան հասակից փոքր երեխաներին աշխատելու գործարաններում։ («Русская Мысль» 1892 թ. № I. II часть, стр. 186):

1)Տես «Մուգճ» 1892 Ն.№ 10, 11, 12.

Մեղանում դեռ ևս զործարանական կեանքըն այնքան չի զարգացել, որ կարիք զգացւի կանանց և երեխաների աշխատող ձեռքերի Դեռ ևս տղամարդկանց թիւը և օրավարձի շափը լիակատար բաւականութիւն է աալիս, նոյն իսկ և աւելանում է մեր զեռ սկզբնական զրութեան մէջ գտնուող զործարանական կեանքի պահանջից:

Բուն նաւթային գործերի մէջ կանանց և երեխաների աշխատանքը բոլորովին բացակայ է: Այդ գործերում պահանջւող անտանելի գժւարութիւնները, վիզիքական զրկանքները, կեղտուութիւնը և ծայրայեղ զգուշութիւնը բոլորովին անհամապատասխան է կանանց բնաւորութեան և ոյժերին: Երեխաների համար էլ ասելը չարժէ... Ոչ կանաչք, ոչ էլ երեխաները պահանջ անգամ չեն կարող յայտնել բուն նաւթային գործերում իբրև բանուորներ ծառայելու: Օժանդակ արհեստների մէջ երեխաներն ունեն արդէն իրանց որոշ տեղը. դա աշակերտի պաշտօնն է բոլոր գործարաններում և արհեստանոցներում: Երեխացին ընդունում են ոչ թէ արհեստը սովորեցնելու համար, ինչպէս զաւառներում, այլ նրա վրայ նայում են իբրև օգնող ձեռքերի վրայ: Գաւառներում աշակերտը ծառայում է ձրի, շատ անգամ նոյն իսկ իր ուտելու հացն իրանց տնից է հետը տանում, որ որքան կարելի է շատ սովորեցնեն արհեստը Երկար ժամանակ մնում է աշակերտ, յետոյ դառնում է քարգահ, ստանում է այդ ժամանակ մի փոքրիկ ռոճիկ (տարեկան 8—40 մանէթ կամ շատ շատ 60 մանէթ—Սլեքսանդրապոլի, Ղարսի կամ Երևանի համար), աւելի վարժում իւր գործի մէջ և ասպա ուստաց օրհնելում, համաճայն համքարական սովորութիւններին իսկ նաւթաշընի գործերում, աշակերտն առաջին ամսից սկսում է ստանալ 5—6 մանէթ ռոճիկ, մի քանի ամսից յետոյ 6—9 մանէթ և կէս տարուց, ութ ամսից յետոյ արդէն նա կարող է ամեն տեղ օրական 40—50—60 կոսկէկով ծառայել, մինչեւ որ կը կարողանայ վարժւել և ազատ արհեստաւոր դառնալ: Կանանց աշխատանքը բացակայում է այսուղից ևս: Սրա պատճառն էլ պէտք է համարել մասսմբ գործերի ծանրութիւնը կանանց համար. նրանք չեն կարող լինել դարբիններ, խառասոններ, կաթսայագործներ, կուանահարներ, բայց ինչն է պատճառը, որ նրանք չեն սովորում «ձեւա-

կերտութիւն», ճախարակագործութիւն և կաղապարագործութիւն, որ լիակատար կարող է համապատասխանել կանացի ոդժերին (մասնաւանդ սկզբի երկուսը): Առհասարակ հասարակական կամ տնտեսական ոչ մի երեսյթ չի կարելի մի պարզ պատճառով բացատրել: Ինչ բան տեղի է ունենում, կատարւում է կեանքի մէջ, նա անշուշտ կունենայ իր գլխաւոր և երկրորդական, երրորդական բազմաթիւ պատճառները: Կենսական ոչ մի երեսյթ չի կարող միայն մի պարզ պատճառի արտադրութիւն լինել: Նոյնը պէտք է կրկնել և այս դէպէռում: չի կարելի բացարձակ ասել, թէ միայն գործի դժւարութիւնն է պատճառը, որ կանանց աշխատանքը բացակայում է նաևթային և օժանդակ գործերում: Այդ բացատրութիւնը կը լինէր չափազանց միակողմանի. այդ տեղ մեծ նշանակութիւն ունի և այն, որ գործարաննատէրերի ամենամեծ մասը կազմում են հայ և թուրք գործարաննատէրերը, որոնց հայեացքը կանանց վրայ լաւ յայտնի է. ոչ պակաս նշանակութիւն ունի և այն, ինչպէս արդէն ասացինք, որ տղամարդիկանց աշխատող ձեռքերի առաջարկութիւնը նոյն իսկ աւելանում է այդ գործերի պահանջից: Աւրեմն էլ Բնշ կարիք կայ դիմելու կանանց համեմատաբար աւելի թոյլ ձեռքերին: Ամենամեծ նշանակութիւն ունեցող պատճառներից մէկն էլ կազմում են սովորութիւնները, զարերով հաստատած աւանդութիւններն ու նախապաշարմունքները. Եթէ ոչ միթէ կինը չէր կարող նոյն իսկ ամենալաջող ձեւակերտող, լաւ ճախարակագործ, տանելի կաղապարագործ լինել: Պէտք է պատճառ բերեն, թէ յշխութիւն կայ, որդեմնութիւն կաց, որդոց խնամել կայ և այլն և այն: Նախ կ'ասենք, որ այդ տեսակ պարագաների ժամանակ կարող է չը յաճախել, չը դործել. աւելի լաւ չէ քիչ ստանայ, քան ոչինչ չը ստանայ: Երկրորդ կը պատասխանենք, որ քիչ չեն անզաւակ կանացք և արդէն մի ամբողջ դասակարգ կազմած չ'ամուսնացող, ամուսիններից բաժանաւած և այլն կանանց թիւը:

Մի բոպէ, ենթադրենք, որ յարմար են այդ գործերը կանանց դասին և բոլոր գործարաններում ուրախութիւնով տեղ են տալիս ցանկացողներին: Ի՞նչ էք կարծում, որ տոկոսը կը կազմէր զործինդողների թւի հայ կամ թուրք կանանց թիւր: Նաո չնչին. կը դիմէին միայն նրանք, որոնք ընկել էին ամենածայր անհրաժեշ-

տութեան մէջ։ Ոչ մի հայ կամ թուրբ կին չէր գնալ գործարան աղամարդկանց հետ աշխատելու, քանի դեռ կարելի կը լինէր ամենաողղօմելի, ամենաշնչին մի հնար գոնել ապրելու, քարշ գալու։ Բոլոր ցանկութիւն յայտնողները լինելու էին ոռուս և զերմանացի կանացք։ Իսկ այդ օտարազգի կանացք ուրիշ ասպարէզներում, ինչպէս, օրինակ, լացարարութիւն, մանրավաճառութիւն, ազախնութիւն, խոհարարութիւն, տնասպահութիւն, խանութպանութիւն և այլն դեռ ևս մրցողներ չունեն տեղացի կանանց կողմից։ Շատ անգամ այդ գործերում կանացք աւելի են վաստակում, քան բանւորը նաւթացին և օժանդակ գործերում։ ուրեմն էլ ի՞նչը կարող էր գոնէ այժմ դրդել կանանց, փոխելու աւելի հեշտը և բաւարրը, աւելի դժւարի հետ։

Այդ և դրանց նման ուրիշ մի քանի պատճառներ անհնարին են զարձնում կանանց աշխատանքը նաւթացին և օժանդակ գործերի մէջ։

Պարտազանցութիւն կը լինէր մեր կողմից, եթէ չը լիշէինք, որ ինտելիգէնս աշխատանքների մէջ արդէն սկսել են կամաց-կամաց տեղ բանել երիտասարդ և ուսում առած կանացք։ Մի քանի գործարաններում (ի հարկէ ոչ հայի կամ թուրքի) գրասենեակների ծառացողները կանացք են, հաշւապահի օգնականը և երկրորդական օգնականը կանացք են և այն։ Այդ գործարաններն ամեն բանի մէջ օրինակ լինող յայտնի գործարաններն են—Ի՞նկենդորչի նաւթհանքը և գրասենեակը, նորել եղբացների թէ նաւթհանքը, թէ գործարանը և թէ գրասենեակը։

Կանանց աշխատանքի վարձատրութիւնը շատ զանազան է թէ միևնայն գործի մէջ ծառայող կանանց համար, թէ տարբեր գործերում ծառայողների համար։ Կինը կարող է ամսական 5 մասէթից սկսած մինչև 30 մասէթ դեռ էլի աւելի ոռնիկ ստանալ նայելով, թէ ի՞նչ հանգամանք ներում և ի՞նչ գործի մէջ է աշխատում։

## V

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆԸ: —ՎԱՐՉԱԳԻՆ: —ՄՐՅՈՒՄՆ ԲԱՆ-  
ԻՈՐՆԵՐԻ ՄԵԶ: —ՍԻԵԼՈՐԴ ՄԱՐԴԻԿ

Բանւորական կեանքի համար ամենագլխաւոր նշանակութիւն  
ունեցող պայմաններն են աշխատանքի տեսողութիւնը և վարձը:  
Ուրիշ շատ պայմաններ կան անհրաժեշտ, բայց նրանցից ոչ մէկի  
պակասութիւնն այնքան զգալի, այնքան սպանիչ կերպով չի աղ-  
դում բանւորի վրայ, որքան այդ երկուսը:

Մարդու կարիքները երկու տեսակի են լինում. ա. Փիզիքա-  
կան և բ. հոգեկան: Մեր ներկայ կեանքը իմաստ կերպով բաժանել  
է բոլոր մարդոց այդ երկու տեսակ կարիքների պահանջներին հա-  
մապատասխան: Մի դասակարգն ապրում է գլխաւորապէս հոգեկան  
պահանջներով, ջղացին համակարգութիւնով, իսկ միւս դասակարգը  
համարեամ ամբողջապէս ֆիզիքական, մարմնական կարիքներով է  
սահմանափակում: Այս վերջին դասակարգի համար ոչ մի բան այն-  
քան անտանելի չէ, որքան ֆիզիքական պահանջներից զրկելը:  
Ամեն պահանջ կարելի է լրացնել ընդարձակ և սահմանափակ չա-  
փերով: Կարելի է ամեն պահանջ սահմանափակել, բայց ոչ մի  
սահմանափակութիւն չի կարելի անվերջ շարունակել. կայ մի շափ,  
որից այն կողմէ էլ անցնել չի կարելի: Անցնողի պատիժը խիստ  
կը լինի —կամ վտանգաւոր հիւանդութիւն կամ մահ:

Բանւոր դասակարգը, որին ներկայ կեանքը բաժին է տևել  
միայն մկանների ֆիզիքական աշխատանքը, ամենից աւել նշանակու-  
թիւն պէտք է տայ, և տալիս էլ է, ֆիզիքական կարիքներին:  
Նրա ամբողջ էութիւնը զբաղւած է համարեամ միայն այդ հոգես-  
րով. հոգեկան կեանքի պահանջները նրա համար երկրորդական  
նշանակութիւն ունեն: Սրանով չեմ ուզում ասել, որ բանւոր մարդ-  
կութեան համար հոգեկան պահանջները գին չունեն —հչ: Նա կա-  
րող է այդ պահանջների համար նոյն իսկ իր զլուխը դնել — սակայն  
դա հակառակ չէ այն ընդհանուր կանոնին, որ բանւորն աւելի շատ  
տնտեսական կեանքի համար արիւն կը թափէ, քան հոգեկան պա-  
հանջների համար:

Ինչպէս ամեն կարիք կարելի է իր վերջին քչութեան

(minimum) հասցնել, այնպէս էլ ամեն աշխատանք կարելի է իր վերջին շատութեան (maximum) հասցնել: Ոչ մէկը, ոչ էլ միւսը չի կարելի անվերջ շարունակել: Ամեն մի աշխատանք պահանջում է մարմնական ոյժի գործածութիւն: Իսկ ոչ մի ոյժ չի կարելի անվերջ ծախսել. կայ մի սահման, որից այն կողմանցնողը կամ կը թուլանայ, վայր կը նիսի, կամ կը մեռնի: Ահա թէ ինչու վարձագինը և աշխատանքի տևողութիւնը բանւորի համար ամենադիման պայմաններն են կաղմում: Դրանք են բանւորի Փիզիքական կեանքի միակ աղբիւրները, դրանք են որոշում նրա միւս պահանջնարի և պարտականութիւնների չափը, մի խօսքով՝ բանւորական աշխարհի գլխաւոր շարժող ոյժերը դրանք են: Ասածներիս ապացոյց կո բող են լինել եւրոպական բանւորների բազմաթիւ գործադրույներն ու ցոյցերը, որոնց համարեամ բոլորի հիմքը կամ դրդիչ պատճառը եղել են այդ երկու պահանջները: Մի կողմից դրամատէրերն ուղում են քչացնել վարձագինը և շատացնել աշխատանքի ժամերի թիւը, իսկ միւս կողմից բազմաթիւ բանւորական խմբերն ու ընկերութիւնները պահանջում են պակասեցնել աշխատութեան ժամերի թիւը և աւելացնել վարձագինը: Մեզանում այդ բանը դեռ ևս չը կայ:

Նաւթաշրջանի բանւորների աշխատանքի տևողութեան մասին արդէն առեիթ ենք ունեցել առանձին-առանձին յիշելու: Մեզ մնում է ընդհանուր ակնարկ գցել այդ առանձին յիշւած թւերի վրայ և եղրակացութիւններ հանել: Բոլոր ամսավարձ բանւորների աշխատութիւնը տեսում է ուղիղ 12 ժամ մի օրում: Ուրեմն նրանց մնում է կէս օր հանգստութեան և միւս պահանջների համար: Օրավարձ բանւորների և արհեստաւորի աշխատութիւնը տեսում է  $10\frac{1}{2}$ —11 ժամ: Բոլոր օրավարձ բանւորներն սկսում են աշխատել առաւօտեան ժամը 6-ից և վերջացնում են երեկոյեան 6-ին: Ժամը  $8\frac{1}{2}$ -ին կամ 9-ին տալիս են նրանց  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  ժամ հանդիսատ նախաճաշելու համար. իսկ 12 ժամին մի ժամ ճաշելու համար Ուրեմն սրանք ևս 12 ժամ աղատ ժամանակ ունեն:

Ընդհանուր տարածւած չափերը սրանք են. բացառութիւնները քիչ են և ապօրինի ամենքի աչքում: Ժամանակի այդ որոշ չափերից անցնելը կախւած է կառավարիչներից և միւս ծառայող-

ներից։ Պէտք է ասել, երբեմն շատ անխիղճ՝ կերպով են վարւում այդ ծառայողները բանւորների հետ։ 12 ժամանակ անդադար աշխատանքից յետով, չեն թողնում խեղճերին հանդիսատ առնելու։ այս արա, այն արա, զնա այս ինչ տեղը և այն և այն։ Բանւորների հետ ամենից խիստ վարւում են այն դասակարգից հազիւ հազ մի քիչ աւելի բարձրացած գործակատարներն ու օգնականները։ Ամենազդւելի բռնակալ իշխանաւորը նա է, ով ձնշւած, ստրկական դրութիւնից քծնելով։ Խաբելով և ուրիշ կեղասոտ միջոցներով ձեռք է բերել «հրամացելու» իրաւունքը։ Սրանցից շատ էլ հեռու չեն գնում մի քանի «կրթւած», երբեմն միրէալիստա համարւող ուսումնական կառավարիչներ։ Մի շարք վաստեր, որ յարմար չեն յօդւածի մէջ յիշւելու, պերճախօս վկաներ են այդ նոր ձեւի ընշանակիր աղաներից դէպի իրանց բոլոր ստորադրւածներն ունեցած տմարդի յարաբերութեան։ Կրանց ամենազդիսաւոր սպահանջը ծառայողից (ինչ ծառայող էլ լինի—միենոյն է) է շնական հնազանդութիւն և յարգանք դէպի իւր կառավարչի անձը։ Բայց դրանցից շատերը մի ժամանակ ոգեւորւում էին ճճնշւած եղբօրը ձեռք կարկառելու գաղափարով... Բանը նրանում չէ, թէ որքան մոքեր ու բառեր գիտէ կամ կարգացել, նոյն իսկ հասկացել է մի մարդ խելքով, այլ բանը նրանումն է, թէ որքան են զարգացել նրա զգացմունքները դէպի որոշ կողմերը, թէ որքան այդ լաւ հասկացած մտքերն օրգանական պահանջ են դառել ասողի համար։

Նաւթաշրջանի գործերում գործադրւող կարգերի որոշողները եղել են մի քանի եւրոպացիների գործարաններ։ ամեն մի դէպի լաւը տանող նորմուծութիւն սկսւում է նախ դրանց գործատեղերից և ապա տարածւում միւս տեղերում ևս։ Այդ կարգ ու կանոններին, այսպէս ասած, տոն տառղներն են՝ նորէլ եղբայրների և նենկենդորֆի ֆիրմաները և ռկաւկազ ու Մերկուրիս շոգենաւային ընկերութեան երկաթագործական բարդ գործարանը։ Բոլոր կանոնաւոր գործարաններն ու նաւթաշահնքերն ընդունել են և անխախտ գործադրում են մի անգամ սովորութիւն դարձած կանոնները աշխատութեան ժամանակի վերաբերմամբ։ իսկ փոքր գործարաններն ու արհեստանոցները միշտ աշխատում են դուրս թռչել կանոնի սահմա-

Նափակութիւններից: Այդ տեղերում արհեստաւորներին և մշակներին բանեցնում են 11 ժամ ուղիղ, զրկելով նախաճաշելու ժամանակից: Աւելի շատ գանցառութիւններ են անում երեկոյեան բանթողի ժամանակը. շատ է պատահում, որ փոքր գործարանների բոլոր ծառացողներն արձակուում են ոչ թէ 6 ժամին, այլ 7—8 ժամերին: Այդ ևս օգտուելու մի տեսակ միջոց է. .

$10^1/2 - 12$  ժամ աշխատանք,—ահա միակ ուրախալի երեսովթը, որ կարողացաց գտնել նաւթային գործերում ծառալող բանւորների կեանքի մէջ: Ամեն բան անմիտիմար է, զրա համար էլ այդ միակ երեսովթը շատ պայծառ գոյներով է երեւում աչքին: Այ թէ ինչն է այդ բանի պատճառը: Ով մի քիչ հետաքրքրւում է լրագրութեան մէջ երեացող եւրոպական բանւորներին վերաբերւած բազմաթիւ լուրերով, անշուշտ նկատած կը լինի, որ այդ զարգացած Արևմուտքի բանւորների աշխատանքի տեղողութիւնը շատ չէ: ինչն զանազանութիւն ունի մերինից: Ահա փաստեր. գերմանական բանւորների աշխատութեան միջին տեղողութիւնը 1891 թւի ընթացքում հաւասար էր 11 ժամի: Նոյն երկրի գործարանական օրէնսդրութիւնը միայն 1891 թւի ընթացքում վճռեց, որ կանաչք աշխատելու են ամենաշատը 11 ժամ, որ գիշերային աշխատութիւնը միանդամայն փակում է կանանց համար («Русск. Мисль» 1892 թ. № I. II գառ, էջ 186): Ֆրանսիական բանւորների համար այդ ժամանակը բաւական փոփոխական է. գործարանական աշխատանքները տեղում են 10—12 ժամ, իսկ, օրինակ, ձիաքարշների վրայ ծառացողներինը 14—16 ժամ: մինչև անդամ 18 ժամ: Այս վերջիններս գործադուլ արին և պահանջեցին օրական 12 ժամ աշխատանք, ամենաշատը: (Русск. Вѣдом. 91 թ. № 135. Պիսմո ից՝ Փարիզ): Աւստրիայում և Շվեյցարիայում ընդունւած է ամենաշատը օրական 11 ժամ աշխատանք (Русск. Вѣдом. 91 թ. № 172 — առաջնորդող յօդւած): Համարեմ նոյնն է և Անգլիայի բանւորների համար:

Եւրոպական բոլոր բանւորական միութիւնների (trade inions)<sup>1)</sup>

<sup>1)</sup> Այդ պէս կոչւում են, սակաէն, միան անգլիական բանւորական միութիւնները, որոնք աւելի զօրեղ են կազմակերպւած, քան Եւրոպական կան. խմբ.

ամենաառաջին պահանջը միշտ եղել է և լինում է «8 ժամ աշխատանք օրական»<sup>1)</sup>: Սրան են ձգտում բոլոր բանորդները, այդքան աշխատանք ունենալուց յետոյ են հարաբեր համարում կեանք և մտաւոր զբաղմունք նոյն իսկ Մարկսի հետեղները, որ այժմ ապաստան են գտել Քրանսիական «Բլանկիս» բանորդների մէջ (ՕԵԲ. Եւենուս 1882 թ. № 1. էոր. 137): Այդ մեզնից շատ հեռու է, այդ եւրոպայում է—կասեն ինձ: Բայց ինչ կանի այդ ասովը եթէ հաղորդեմ, որ նենկենդորֆի օրինակելի նաւթահանքը փորձ է անում մոցնելու իւր գործերում 8 ժամ աշխատանք... Զէ որ մեզանում, Կովկասում, գործարանական կեանքի դեռ ևս խանձարուրացին դրութեան մէջ եղած ժամանակ այդ տեսակ մի մարդասէր քայլ մի դրամատիրոջ կողմից, չափազանց զարմանալի և ուրախալի կը թւաց: սրտացաւ մարդուն: Երբ 1892 թ-ի յունարի չեմ ցիշում որ համարի մէջ „Եաօմիկ“ լրագրում աչքիս ընկաւ այդ լուրը, ոսերս գետնից կտրւեց, ինչպէս ասում են, չէի ուզում աչքերիս հաւատալ. Բագու և 8 ժամ աշխատանք մոցնելու փորձեր, այն էլ նաւթացին գործում, որ այն դժոխացին ծանրութիւնները չունի, ինչ ուրիշ գործերում կայ, այն էլ այս տեսակ գործերի ընկած դրութեան ժամանակ...

Այս փոքրիկ համեմատութիւնից յետոյ՝ ի՞նչպէս ուրախալի չանւանել նաւթացին գործերում ծառայող բանորդների  $10\frac{1}{2}$ —12 ժամ աշխատանքը: Դեռ ևս չը հաշւեցի Պ. Եան-ժուլի, Մոսկացի գործարանական շրջանի դիրեկտորի տւած փաստերը, որ ընդհանրապէս այդ շրջանում գործարանական աշխատութեան տեսզութիւնը հաւասար է 14—16 և նոյն իսկ 18 ժամի: 16 կամ 18 ժամ անընդհատ աշխատանք—չէ որ ինչ տեսակ գործարանում կուզէ լինի, երկաթէ մարդն անդամ երկու երեք տարուց յետոյ ձեռքից կը գնայ այդ տեղերում բանելով: Բայց այդ փաստ է, որին չը հաւատալ չի կարելի:

Ամեն երկոյթ ունի իր պատճառը: Այս ուրախալի երկոյթն էլ ունի իր որոշ պատճառները: Նատ զարմանալի կը լինէր, եթէ

<sup>1)</sup> 8 ժամակ աշխատանքի պահանջը բանորդների կողմից համեմատապէս նոր է ներոպալում:

Շուշեցի կամ Շամախեցի դրամատէրերը համաձայնէին  $10\frac{1}{2}$ —12 ժամ աշխատանքի, երբ իրանց հայրենիքում միշտ տեսել են, որ գիշացին գուրս է գալիս առաւտեան ժամը 4—5-ին (մինչև անդամ գիշերը ժամը 2-ին, երբ արտը հերկելու է լինում) և աշխատում է մինչև երեկոյեան 8—9 ժամը. զժւար և զարմալի կը լինէր, եթէ նաւթացին գործի մէջ չը լինէր, այլ մի ուրիշ արդիւնաբերութեան մէջ: Բոլոր գաղտնիքը նրանումն է, որ նաւթացին գործը եղել է ամենաօպուակար գործերից մէկը, որի տաւծ հէքիաթական հարստութեան մասին ամեն մարդ լսած կը լինի: 1891 թւի և ներկայիս նաւթացին կրիզիսը ցոյց է տալիս, որ միայն օգտի առատութիւնն է պատճառը, որ այդ երկոյժը մինչև օրս պահպանում է: Արդէն սովորական սրատութիւնը սկսում է նաւթացին գործերում: արդէն քշացնում են օրավարձը և ոռոճիկները, կրծատում են ծառալողների թիւը, սրան կը յաջորդէ անշուշտ, թէե մի քիչ ուշ, բանելու ժամերի թւի աւելացնելը... Բայց դրա մասին յետով:

Բանելու ժամանակի մասին խօսելիս չի կարելի չը լիշել նաև գիշերացին աշխատանքը: Չուտ նաւթացին գործերում բանւորները լինում են երկու խումբ—գիշերացին և ցերեկայ աշխատանքների համար, իսկ օժանդակ արհեստներում և առհասարակ օրավարձ բանւորների համար գիշերացին աշխատանքը պարտաւորեցուցիչ է: Գոնէ խօսքով այդպէս է: Երբ լինում է որ և է հարկաւոր գործ, իսկոյն պատիրում են բանւորին մնալ և դիշերը գործել: «Կարող է չը մնալ. բանւորն էլ ազատ մարդ է, ամեն բան կամաւոր է անուո՞ն: Որքան զառն ծիծաղ. ես կարծում եմ, որ ազատութեան դաշտավարը սրանից աւելի կծու կերպով ծաղրել չի կարելի: Ո՞վ է գժւել, որ քաղցած մնայ, նվէ ուզում, որ մի քանի շարաթ, գուցէ և մի քանի ամիս, անգործ թափառէ, մուրացկանութեան հասնի: Զի՞ համաձայնում բանւորն աշխատել դիշերը, հետևեալ օրը նրան դուրս կը գցեն, մի յիմար բան պատճառ բերելով: Ազատ յարաբերութիւն կարող է գոյութիւն ունենալ ճիշտ կերպով այն ժամանակ, երբ շփող կողմերը տնտեսապէս, մուաւորապէս և բարոյապէս իրար հաւասար են քիչ թէ շատ, հակառակ դէպքում ազատութիւնը խախտում է նշամարելի կամ աննշամարելի ձեռով:

(Կը շաբախակւ)